Հաստատված է
«Ար Ռադիո Միջմայրցամաքային »
ՍՊ ընկերության
մասնակիցների ժողովի կողմից

«05» 04 2007թ.

Ընկերության տնօրեն

Հ. Կոստանյան

Տպագրված է 5 օրինակից
Օրինակ # 1
Գրանցված է
ՀՀ Ձեռնարկությունների
Պետական Ռեգիստրի
կողմից 30.12.1999թ
գրանցման թիվ 273. 110.02699
վկայական թիվ 02Ա - 046925
Թիվ 001.2 փոփոխությունը
գրանցված է իրավաբանական
անձանց պետական
ռեգիստրի Նորք-Մարաշի
տարածքային բաժնի կողմից

«06» 04 2007թ

Նորք-Մարաշի Տ/Բ պետ

Գ. Գևորգյան

«Ար Ռադիո Միջմայրցամաքային» ՍՊԸ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(Նոր խմբագրություն)

Երևան 2007թ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. «ԱՐ Ռադիո Միջմայրցամաքային» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (հետագայում՝ Ընկերություն), համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ, որի կանոնադրական կապիտալը բաժանված է սույն կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի:
«ԱՐ Ռադիո Միջմայրցամաքային» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ստեղծվել է «ԱՐ Ռադիո Միջմայրցամաքային» խմբագրության վերակազմավորման արդյունքում և հանդիսանում է նրա իրավահաջորդը (գրանցված՝ 01.11.1996թ, Կոլեգիայի թիվ 32/1-3 որոշում):
Ընկերության մասնակիցները պատասխանատու չեն Ընկերության պարտավորությունների համար և իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են Ընկերության հետ կապված վնասների ռիսկը:

1.2. Ընկերության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (լուծարման մասին պետական գրանցմատյանում գրառման) պահից:

1.3. Ընկերությունն ունի իր ֆիրմային անվանմամբ կլոր կնիք (հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով), դրոշմներ և բլանկներ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ, ապրանքային, առևտրային և այլ նշաններ ու ֆիրմային այլ վավերապայմաններ:

1.4. Ընկերությունը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական Օրենսգրքով (այսուհետև՝ Օրենսգիրք), Հայաստանի Հանրապետության օրենսդրական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.5. Ընկերության մասնակիցների և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են Օրենսգրքով, ՍՊԸ Օրենքով և սույն Կանոնադրությամբ:

1.6. Ընկերությունն իր պարտավորություններով պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով: Ընկերությունը պատասխանատու չէ իր մասնակիցների պարտավորությունների համար:

1.7. Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար:
Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:

1.8. Ընկերության ֆիրմային անվանումն է՝

հայերեն լրիվ՝	«ԱՐ Ռադիո Միջմայրցամաքային» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
կրճատ՝	«ԱՐ Ռադիո Միջմայրցամաքային» ՍՊԸ
ռուսերեն լրիվ՝	ООО «АР Радио Интерконтиненталь»
կրճատ՝	ООО «АР Радио Интерконтиненталь»
անգլերեն լրիվ՝	“Ar Radio Intercontinental” company limited
կրճատ՝	“Ar Radio Intercontinental” co.Ltd

1.9. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝
ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 5:

2. Ընկերության գործունեության առարկան և նպատակը

2.1. Ընկերության ստեղծման նպատակն է տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:

2.2. Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են՝

- ռադիոհաղորդումների պատրաստում և հեռարձակում աշխարհի տարբեր ուղղություններով և տարբեր լեզուներով
- Հայաստանի ներքին և արտաքին կյանքի լուսաբանում
- լուրերի, երաժշտական, կրոնական և այլ կարգի ու բնույթի հաղորդումների միջոցով նպաստել ազգային պետականության կայունացմանն ու ամրապնդմանը
- տարածել ազգային գաղափարներ
- լուրերի հավաքում և տրամադրում միջազգային մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներին

2.3.Ընկերությունը կարող է իրականացնել օրենքով չարգելված ցանկացած տնտեսական գործունեություն:

2.4. Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի (հատուկ թույլտվության) առկայության դեպքում՝ լիցենզիան ստանալու պահից կամ դրանում նշված ժամկետում: Եթե լիցենզիայի հատկացման պայմաններում նախատեսված է, որ Ընկերությունը բացի լիցենզավորվող գործունեությունից այլ գործունեությամբ զբաղվել չի կարող կամ սահմանափակումներ են դրվում գործունեության առանձին տեսակներով զբաղվելու վրա, ապա Ընկերությունը լիցենզիայի գործողության ժամկետում իրավունք չունի զբաղվել այլ գործունեությամբ, բացառությամբ լիցենզիայով նախատեսվածների կամ այն գործունեություններով, որոնց մասին նշված է լիցենզիայի մեջ:

3. Ընկերության իրավական կարգավիճակը, իրավունքներն ու պարտականությունները

3.1. Պետական գրանցման պահից Ընկերությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ: Ընկերությունը որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Ընկերությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, Հայաստանի Հանրապետության և(կամ) օտարերկրյա բանկային հիմնարկություններում՝ հաշվարկային հաշիվներ (դրամով, տարադրամով):

3.2. Ընկերությունը կարող է լինել այլ ընկերության (այդ թվում՝ դուստր ու կախյալ) հիմնադիր (մասնակից), բացառությամբ Օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերի:

3.3. Ընկերությունն իրավունք ունի ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր և ներկայացուցչություններ), ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ այլ պետությունների տարածքում:

Կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնելու համար Ընկերությունը կարող է ստեղծել հիմնարկներ:

Ընկերության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները իրավաբանական անձինք չեն և գործում են Ընկերության հաստատած կանոնադրությունների հիման վրա, իսկ նրանց ղեկավարները գործում են Ընկերության լիազորագրերի հիման վրա:

3.4.Ընկերությունն իրավունք ունի.

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը կամ այլ օգտակար արդյունքը,
- ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ բանկային և առևտրային վարկեր, այդ թվում՝ արտարժույթով, օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տարածել արժեթղթեր,
- Օտարել, վարձակալության տալ, փոխանակել, օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով փոխանցել գույքային իրավունքներ, լինել գրավառու և գրավատու,
- Օրենսդրությամբ սահմանված կարգով արտահանել և ներմուծել գույքի օբյեկտներ, արտադրված, գնված և այլ օրինական ձևով ստացված արտադրանք, ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել օտարերկրյա իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկությունների, կազմակերպությունների և քաղաքացիների համար, օգտվել նրանց կատարած աշխատանքներից և մատուցած ծառայություններից, այլ պետություններում նրանց օրենսդրությանը համապատասխան իրականացնել ներդրումներ, ստեղծել իրավաբանական անձինք և (կամ) ձեռնարկություններ և անդամակցել իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկությունների
- օգտվել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

3.5. Ընկերությունը պարտավոր է՝

- Օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում և ներկայացնել վիճակագրական հաշվետվություն,
- աշխատանքային պայմանագրեր կնքել Ընկերության աշխատակիցների հետ,
- պատասխանատվություն կրել և փոխհատուցել իր կողմից հասցրած վնասը՝ կնքած պայմանագրերը չկատարելու կամ հարկ եղածին պես չկատարելու, այլ անձանց սեփականության իրավունքը խախտելու համար,

- օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել Ընկերության սնանկացման մասին, այն դեպքում, երբ հնարավոր չէ բավարարել պարտատերերի օրինական գույքային պահանջները
- անհապաղ տեղեկություններ հրապարակել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի կամ բաժնետիրական ընկերության քվեարկող բաժնետոմսերի ավելի քան քսան տոկոսը ձեռք բերելու մասին,
- ապահովել Ընկերության փաստաթղթերի (Ընկերության կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, Ընկերության ներքին փաստաթղթերի, առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների կանոնադրությունների, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, կառավարման մարմինների նիստերի արձանագրությունների, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումը
- կրել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

4. Ընկերության մասնակիցները, նրանց իրավունքներն ու պարտականությունները

4.1. Անձը համարվում է Ընկերության մասնակից իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից Ընկերության մասնակիցների գրանցամատյանում գրանցվելու պահից: Մասնակիցները կարող են փոփոխվել Օրենքով և Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով՝ մասնակիցների ընդունման, ազատման, հեռացման, ամբողջ բաժնեմասի օտարման միջոցով, ինչպես նաև մասնակցի ամբողջ բաժնեմասի վրա բռնագանձում տարածելու կամ այն բռնագրավելու դեպքում:

Ընկերությունը չի կարող որպես միակ մասնակից ունենալ մեկ անձից կազմված այլ տնտեսական ընկերություն:

4.2.Ընկերության մասնակիցներն իրավունք ունեն՝

- Օրենքով կամ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել Ընկերության կառավարմանը՝ ներկա գտնվել ընդհանուր ժողովին, հանդես գալ առաջարկություններով, մասնակցել օրակարգային հարցերի քննարկմանը և քվեարկել որոշումներ ընդունելիս
- ստանալ Ընկերության գործունեությունից ստացվող շահույթի մասը
- Ընկերության լուծարման դեպքում ստանալ շահույթի իր մասը, պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած գույքի մասը կամ դրա արժեքը
- սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տեղեկություններ ստանալ Ընկերության գործունեության մասին՝ գաղտնի փաստաթղթերից բացի, ծանոթանալ հաշվապահական հաշվառման, հաշվետվության, Ընկերության արտադրատնտեսական գործունեության այլ փաստաթղթերի հետ
- ցանկացած պահի դուրս գալ Ընկերությունից (անկախ մյուս մասնակիցների համաձայնությունից)
- հայցով դիմել դատարան՝ Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով
- տեղեկատվություն ստանալ ընկերության գործունեության մասին, ծանոթանալ հաշվապահական հաշվառման, հաշվետվության, ընկերության արտադրատնտեսական գործունեության այլ փաստաթղթերի հետ
- հանդես գալ առաջարկություններով Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովում
- Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող լրիվ վճարված բաժնեմասերի ձայների չափով
- Ընկերության միջոցների հաշվին Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում անվճար ստանալ համապատասխան քանակությամբ բաժնեմասեր
- օգտվել Օրենքով և Ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից

4.3.Ընկերության մասնակիցները պարտավոր են՝

- սույն կանոնադրությամբ սահմանված կարգի համաձայն կատարել ներդրումներ Ընկերության կանոնադրական կապիտալում
- չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկություններ
- կատարել Ընկերության նկատմամբ ստանձնած պարտավորությունները
- պահպանել սույն կանոնադրության դրույթները

4.4. Ընկերության կանոնադրական կապիտալում բաժնեմասը փոխանցելը

4.4.1. Ընկերության մասնակիցն իրավունք ունի իր բաժնեմասը (դրա մասը) վաճառել կամ այլ՝ օրենքով չարգելված ձևով, օտարել Ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների, ինչպես նաև երրորդ անձանց: Ընդ որում, մյուս մասնակիցներն ունեն այդ բաժնեմասը նույն գնով ձեռք բերման նախապատվության իրավունք՝ Ընկերության կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համամասնորեն:
Եթե Ընկերության մյուս մասնակիցները չեն օգտագործել բաժնեմասը (դրա մասը) գնելու իրենց նախապատվության իրավունքը կամ այն օգտագործել են մասնամբ, ապա Ընկերությունն ունի այդ բաժնեմասը նույն գնով ձեռք բերման նախապատվության իրավունք:
Մասնակիցների, ինչպես նաև Ընկերության կողմից իրենց վաճառվող բաժնեմասերի ձեռք բերման նախապատվության իրավունքը չիրականացնելու դեպքում բաժնեմասերը կարող են օտարվել երրորդ անձանց:
Օրենքով նախատեսված բաժնեմասը գնելու նախապատվության իրավունքի զիջում չի թույլատրվում:

4.4.2. Երրորդ անձանց օտարման անհնարինության դեպքում մասնակցի պահանջով Ընկերությունն ինքը պարտավոր է ձեռք բերել մասնակցի բաժնեմասը, այն իրացնել մեկ տարվա ընթացքում այլ մասնակիցների կամ երրորդ անձանց կամ որոշում ընդունել բաժնեմասի չբաշխված մասի մարման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման մասին:

4.4.3.Նախապատվության իրավունքի (այլ մասնակիցների կողմից վաճառվող բաժնեմասերի ձեռքբերման) իրականացման ժամկետը սահմանվում է մեկ ամիս:

4.5. Ընկերության կանոնադրական կապիտալի բաժնեմասերն անցնում են Ընկերության մասնակից քաղաքացիների ժառանգներին և իրավաբանական անձանց իրավահաջորդներին միայն Ընկերության մնացած բոլոր մասնակցիների համաձայնությամբ: Ընդ որում բաժնեմասն անցնելու համար համաձայնություն չտալու, ինչպես նաև ժառանգի (իրավահաջորդի) բաժնեմասից հրաժարվելու դեպքում դրա արժեքի վճարումը կատարվում է սույն կանոնադրության 4.7. կետում սահմանված կարգով:

4.6. Ընկերության մասնակիցը (մասնակիցները), որը (որոնք) գումարային առումով տնօրինում է (են) Ընկերության առնվազն տասը տոկոս բաժնեմասը, իրավունք ունի (ունեն) դատական կարգով պահանջել Ընկերության այլ մասնակցի հեռացումն Ընկերությունից, եթե նա իր գործողություններով կամ անգործությամբ դժվարացնում կամ անհնարին է դարձնում Ընկերության բնականոն գործունեությունը:
Ընկերությունից հեռացված մասնակցի բաժնեմասն անցնում է Ընկերությանը: Ընկերությունը պարտավոր է հեռացված մասնակցին վճարել բաժնեմասի արժեքը սույն կանոնադրության 4.7. կետով սահմանված կարգով:

4.7. Ընկերությունից դուրս եկող մասնակցի բաժնեմասը դուրս գալու դիմումը ներկայացնելու պահից փոխանցվում է Ընկերությանը:
Ընկերությունից դուրս եկող մասնակցի հետ հաշվարկները կատարվում են հետևյալ կարգով.

- վճարվում է կանոնադրական կապիտալում նրա բաժնեմասի (կանոնադրական կապիտալում նրա ավանդի ոչ լրիվ վճարման դեպքում՝ վճարված մասին համապատասխան բաժնեմասի) արժեքը
- բաժնեմասի արժեքը որոշվում է դուրս գալու մասին դիմումը ներկայացնելու պահին Ընկերության վերջին հաշվետու ժամանակաշրջանի հաշվապահական հաշվետվությունների հիման վրա
- մասնակցին նրա համաձայնությամբ կարող է տրվել նրա բաժնեմասի արժեքին համապատասխան գույք՝ ընդհանուր ժողովի որոշմամբ
- եթե որպես ավանդ ներդրվել է գույքի օգտագործման իրավունք, ապա Ընկերությունը պահպանում է այդ իրավունքը մինչև օգտագործման իրավունքի ժամկետի ավարտը
- մասնակիցը պարտավոր չէ վերադարձնել իր կողմից բարեխղճորեն ստացած շահույթը

Ընկերությունը պարտավոր է մասնակցին վճարել բաժնեմասի արժեքը, Ընկերությունից դուրս գալու մասին դիմումը ներկայացնելու պահից 6 ամսվա ընթացքում :

4.8.Ընկերության մասնակիցն իրավունք ունի իր սեփականությունը հանդիսացող բաժնեմասը (դրա մասը) գրավ դնել Ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների և երրորդ անձանց: Գրավ դրված բաժնեմասի (դրա մասի) վրա բռնագանձում տարածելու դեպքում Ընկերության մյուս մասնակիցները և Ընկերությունը օգտվում են բաժնեմասը (դրա մասը) ձեռք բերելու նախապատվության իրավունքից Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

Ընկերության մասնակցի բաժնեմասի նկատմամբ գրավի իրավունքը ծագում է իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից գրավի իրավունքի գրանցման պահից: Ընկերության մասնակցի բաժնեմասի նկատմամբ գրավի իրավունքի գրանցման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Ընկերության կանոնադրական կապիտալը, նրա փոփոխումը

5.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 50. 000 (հիսուն հազար) դրամ, որը բաժանված է 100 բաժնեմասերի, մեկ բաժնեմասի անվանական արժեքը կազմում է 500 դրամ: Կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող Ընկերության գույքի նվազագույն չափը: Ընկերության կանոնադրական կապիտալը չի կարող պակաս լինել «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չափից:

Ընկերության բոլոր հարյուր բաժնեմասերը տեղաբաշխված են լրիվ վճարված և պատկանում են Ընկերության մասնակիցներին, որոնց անձնագրային տվյալները և բաժնեմասերը (բաժնեմասերի քանակը) բերված է սույն կանոնադրության բաղկացուցիչ մաս հանդիսացող հավելվածում:

5.2. Ընկերության մասնակիցները կարող են իրենց բաժնեմասերը օտարել սույն կանոնանդրության 4.4. կետով սահմանված կարգով

5.3. Ընկերությունը կարող է փոփոխել կանոնադրական կապիտալի մեծությունը: Այդ մասին որոշումն ուժի մեջ է մտնում պետական ռեգիստրում համապատասխան փոփոխությունների պետական գրանցման պահից:

Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը հնարավոր է միայն նրա ամբողջությամբ վճարումից հետո:

Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը կարող է կատարվել.

- Ընկերության գույքի հաշվին,
- Ընկերության մասնակիցների լրացուցիչ ավանդների հաշվին
- երրորդ անձանց ավանդների հաշվին

Ընկերության մասնակիցների լրացուցիչ կամ երրորդ անձանց ավանդների հաշվին կանոնադրական կապիտալի ավելացման մասին որոշումն ընդունվում է Ընկերության մասնակիցների միաձայն որոշմամբ, որով որոշվում է լրացուցիչ ներդրումների գումարային արժեքը և ներդրումների կատարման կարգն ու ժամկետները: Այդ որոշմամբ պետք է սահմանվի լրացուցիչ ավանդների ընդհանուր արժեքը, ինչպես նաև սահմանվի լրացուցիչ ավանդի արժեքի և այն գումարի՝ բոլոր մասնակիցների համար միասնական հարաբերակցությունը, որով ավելացվում է նրա բաժնեմասի անվանական արժեքը: Սահմանված ժամկետի ավարտից, մեկ ամիս հետո Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը պարտավոր է որոշում ընդունել (ձայների որակյալ մեծամասնությամբ) լրացուցիչ ավանդների ներդրման արդյունքների, ներդրումների հաշվին ձևավորված կանոնադրական կապիտալի, Ընկերության մասնակիցների բաժնեմասերի չափերի փոփոխման և սույն կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:

Լրացուցիչ ավանդները ներդրվում են այդ մասին որոշում ընդունելուց հետո մեկ տարվա ընթացքում:

Ընկերության մասնակցների կողմից լրացուցիչ ավանդների ներդրման միջոցով կանոնադրական կապիտալի ավելացման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով:

Ընկերության մասնակցի կամ երրորդ անձի դիմումի հիման վրա Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով:

Ընկերությունն իրավունք ունի, իսկ օրենքով սահմանված դեպքերում պարտավոր է նվազեցնել իր կանոնադրական կապիտալը:

Եթե երկրորդ կամ յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո, Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից, ապա Ընկերությունը պարտավոր է հայտարարել իր կանոնադրական կապիտալի նվազման մասին և սահմանված կարգով գրանցել դրա նվազումը: Եթե Ընկերության նշված ակտիվների արժեքը պակասում է կանոնադրական կապիտալի օրենքով սահմանված նվազագույն չափից, Ընկերությունը ենթակա է լուծարման:

Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցում թույլատրվում է, նրա բոլոր պարտատերերին

Ընկերության կակոնադրական կապիտալի նվազեցման և նրա նոր չափի մասին գրավոր տեղեկացնելուց հետո, ինչպես նաև այդ մասին տեղեկություններ հրապարակել իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլի միջոցով: Ընկերության պարտատերերն իրավունք ունեն պահանջել իրենց նկատմամբ Ընկերության պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ կամ պարտավորությունների վաղաժամկետ դադարում կամ կատարում, ինչպես նաև իրենց վնասների հատուցում:

Կանոնադրական կապիտալի նվազեցման հետ կապված կանոնադրությունների փոփոխությունների գրանցումը կատարվում է այդ փոփոխությունների մասին որոշումն ընդունելուց 60 օր լրանալուց հետո, պարտատերերի առաջացած բոլոր պահանջների բավարարման դեպքում:

Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցում կարող է կատարվել բոլոր մասնակիցների բաժնեմասերի անվանական արժեքների նվազեցմամբ և (կամ) Ընկերությանը պատկանող բաժնեմասերի մարմամբ:

Կանոնադրական կապիտալի ավելացման կամ նվազեցման մասին որոշումն ուժի մեջ է մտնում այդ փոփոխության պետական գրանցման պահից:

Ընկերության կանոնադրական կապիտալում Ընկերության մասնակցի բաժնեմասի վրա բռնագանձում տարածելը կամ բռնագրավումը կատարվում է Օրենսգրքով և Օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

6. Ընկերության գույքը, կապիտալները ու շահույթը

6.1. Ընկերությունը հանդիսանում է սեփականատեր՝

- Ընկերության հիմնադիրների /մասնակիցների/ ավանդների և դրանց հաշվին ստեղծված գույքի
- Ընկերության տնտեսական գործունեության հետևանքով արտադրված արտադրանքի և ձեռք բերված գույքի
- ստացված եկամուտների
- գործող օրենսդրությամբ չարգելված հիմունքներով ձեռք բերած գույքի:

Ընկերության սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք օրենքին համապատասխան չեն կարող պատկանել իրավաբանական անձանց:

Ընկերության գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները, կապված՝ գույքը Ընկերության սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

6.2. Ընկերության մասնակցի ներդրումը կարող է լինել դրամ, արժեթղթեր, այլ գույք կամ գույքային իրավունքներ, ինչպես նաև դրամական գնահատում ունեցող այլ իրավունքներ:

Ներդրվող գույքի արժեքը որոշվում է Ընկերության հիմնադիրների (մասնակիցների) միջև համաձայնությամբ և ենթակա է անկախ փորձագիտական վերստուգման (աուդիտի):

Ընկերության հիմնադիրների (մասնակիցների) կամ Ընկերության մեջ ընդգրկվող երրորդ անձանց կողմից ներդրվող ոչ դրամային ավանդների դրամական գնահատականը հաստատվում է ընդհանուր ժողովի կողմից միաձայն կարգով: Եթե Ընկերության մասնակցի ոչ դրամային ավանդով վճարվող բաժնեմասի անվանական արժեքը (անվանական արժեքի մեծացումը) ավելին է Ընկերության պետական գրանցման համար փաստաթղթեր ներկայացնելու պահին սահմանված նվազագույն աշխատավարձի 500-ապատիկից, ապա նման ավանդը պետք է գնահատվի անկախ գնահատողի (աուդիտորի) կողմից:

Կանոնադրական կապիտալում մասնակցի բաժնեմասը գնահատվում է տեղական արժույթով:

6.3. Եթե գույքը, նյութական արժեքները, ֆինանսական այլ ռեսուրսները փոխանցվում են Ընկերությանը միայն օգտագործման նպատակով, ապա ներդրման չափը և համապատասխանաբար մասնակից-վարձատուի բաժնեմասը որոշվում է ելնելով այդ գույքի օգտագործման դիմաց տրվող վարձակալական վճարից:

6.4. Ընկերությունում ստեղծվում է պահուստային կապիտալ՝ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով: Այս կապիտալի ձևավորումն իրականացվում է շահույթից կատարվող տարեկան մասհանումների միջոցով՝ մինչև նախատեսված չափերին հասնելը: Պահուստային կապիտալ կատարվող մասհանումների չափը սահմանվում է մաքուր շահույթի առնվազն 5 տոկոսի չափով: Պահուստային կապիտալի միջոցների ծախսման կարգը որոշվում է մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից:

6.5. Սահմանված կարգով առաջացող մաքուր շահույթի բաշխումը Ընկերության մասնակիցների միջև իրականացվում է կանոնադրական կապիտալում մասնակիցների ունեցած բաժնեմասերին համապատասխան՝ օրենքով սահմանված կարգով:

7. . Ընկերության կառավարումը

7.1. Ընկերության մարմիններն են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը և Ընկերության գործադիր մարմինը՝ տնօրենը:

7.2. Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը մասնակիցների ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:

Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովներում քվեարկությունների ժամանակ Ընկերության մասնակիցներն ունեն Ընկերության կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համապատասխան ձայների քանակ:

7.3. Ընկերության մասնակիցների հերթական ընդհանուր ժողովը հրավիրվում է Ընկերության տնօրենի կողմից տարեկան մեկ անգամ ֆինանսական տարվա ավարտից ոչ շուտ, քան երկու ամիս ոչ ուշ, քան չորս ամիս անց:

Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել մասնակիցների հերթական ընդհանուր ժողովը՝ Ընկերության գործունեության տարեկան արդյունքները հաստատելու համար:

Ընկերության մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովը հրավիրվում է Ընկերության տնօրենի կողմից Օրենքով և Ընկերության կանոնադրությամբ սահմանված դեպքերում, ինչպես նաև բոլոր այն դեպքերում, երբ դա են պահանջում Ընկերության և նրա մասնակիցների շահերը:

7.4. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում.

1. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ:
2. Ընկերության կողմից բաժնեմասի (բաժնեմասերի) ձեռք բերումը և դրանց իրացումը Օրենքով սահմանված դեպքերում:
3. Ընկերության վերակազմակերպումը:
4. Ընկերության լուծարումը,
5. Ընկերության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշիռների (լուծարման ամփոփիչ, լուծարման միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների) հաստատումը
6. Ընկերության կանոնադրական կապիտալի չափի ավելացումը
7. Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը
8. Կազմակերպությունների (այդ թվում՝ դուստր և կախյալ ընկերությունների) հիմնադրումը
9. Կազմակերպություններում (այդ թվում՝ դուստր և կախյալ ընկերություններում) մասնակցության մասին որոշումների ընդունումը:
10. Ընկերության տնօրենի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ինչպես նաև Ընկերության գործադիր մարմնի լիազորությունները կառավարչին (առևտրային կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր) տալու հարցերը:
11. Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը:
12. Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը
13. Ընկերության աուդիտի իրականացման որոշումն ընդունելը
14. Ընկերության տարեկան հաշվետվությունների, տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատումը:
15. Ընկերության շահույթն ու վնասները Ընկերության մասնակիցների միջև բաշխման մասին որոշման ընդունումը
16. Ընկերության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների աշխատանքի տարեկան արդյունքների հաստատումը:
17. Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը:
18. Ընկերության կողմից արժեթղթերի թողարկման մասին որոշումն ընդունելը
19. Ընկերության գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքներ (որոնց արժեքը գերազանցում է զուտ ակտիվների մեծության 1/4-ը) կատարելու մասին որոշման ընդունումը
20. Ընկերության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծումը, գործունեության դադարեցումը, դրանց կանոնադրությունների հաստատումը:
21. Ընկերության ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի /Ընկերության ներքին փաստաթղթեր/ ընդունումը
22. Ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրման պայմանների որոշումը

Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն իրավունք ունի քննարկել և որոշումներ ընդունել նաև Օրենքով և սույն կանոնադրությամբ ընդհանուր ժողովի իրավասությանը պատկանող ցանկացած հարցի շուրջ:

7.5. Սույն կանոնադրության 7.4. կետի բոլոր ենթակետերով (բացի 13,16 և 22 ենթակետերից) սահմանված հարցերը հանդիսանում են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասության հարցեր և չեն կարող փոխանցվել Ընկերության գործադիր մարմնին

7.6. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն իրավազոր է (քվորում ունի) , եթե դրան մասնակցում են Ընկերության մասնակիցների ձայների ընդհանուր թվի կեսից ավելիին տնօրինող մասնակիցները: Սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում (երբ քննարկվող հարցը պահանջում է մասնակիցների միաձայնությունը) ժողովը իրավասու է մասնակիցների (նրանց ներկայացուցիչների) ներկայության դեպքում:

7.7.Սույն կանոնադրության 7.4. կետի 1, 6, 7 ենթակետերով սահմանված հարցերի շուրջ որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցողների ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս Ընկերության բոլոր մասնակիցների ձայների 2/3-ից, 7.4. կետի 10 և 19 ենթակետերով սահմանված հարցերի շուրջ որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցողների ձայների 3/4-ով, 11, 14 և 15 ենթակետերով սահմանված հարցերի շուրջ որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցողների ձայների 2/3-ով, սակայն ոչ պակաս Ընկերության բոլոր մասնակիցների ձայների կեսից, 3 և 4 ենթակետերով սահմանված հարցերի շուրջ որոշումներն ընդունվում են Ընկերության մասնակիցների միաձայն որոշմամբ, իսկ մնացած հարցերի շուրջ՝ Ընկերության բոլոր մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:

7.8.Ընկերության ընդհանուր ժողովի իրավասությանը վերաբերվող հարցերի լուծումը կատարվում է ժողովի նիստում՝ օրակարգի հարցերի քննարկման, քվեարկության դրված հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման նպատակով մասնակիցների համատեղ ներկա գտնվելով կամ հեռակա կարգով քվեարկության (կամ հարցման) միջոցով: Այդ դեպքում որոշման նախագիծն ուղարկվում է մասնակիցներին, որոնք պետք է գրավոր հայտնեն իրենց կարծիքը: Նման քվեարկություն կարող է անցկացվել փաստաթղթերը փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային կամ փոխանցվող և ընդունվող հաղորդագրությունների իսկությունը և դրանց փաստաթղթային հաստատումն ապահովող կապի այլ միջոցներով փոխանակելու միջոցով:

7.9. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովների որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ:

7.10. Մեկ մասնակից ունեցող ընկերությունում Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի իրավասության հարցերի կապակցությամբ որոշումներն ընդունվում են մասնակցի կողմից միանձնյա և ձևակերպվում են գրավոր:

7.11. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն (առանց ձայնի իրավունքի) տնօրենը, վերստուգիչ հանձնաժողովի անդամները կամ վերստուգողը, աուդիտն իրականացնող անձը:

7.12. Ընկերության յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի պահանջելու հարցերի քննարկում Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովում, այն պայմանով, որ այն ներկայացված լինի նիստը սկսվելուց առնվազն տասը օր առաջ:

7.13. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարությունն իրականացնում է տնօրենը, որն ընտրվում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից 3 տարի ժամկետով: Ընկերության և Ընկերության տնօրենի միջև պայմանագիրն ստորագրվում է տնօրենին ընտրած ընդհանուր ժողովի նախագահող անձի կամ ընդհանուր ժողովի կողմից լիազորված անձի կողմից (եթե տվյալ ընդհանուր ժողովում նախագահել է տնօրենը):

Տնօրենը լուծում է բոլոր հարցերը, բացի Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերից: Տնօրենը հրավիրում է Ընկերության մասնակիցների հերթական և արտահերթ ընդհանուր ժողովները, կազմակերպում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովների որոշումների կատարումը, հաշվետու է ընդհանուր ժողովին և իրավունք չունի մասնակիցների համար պարտադիր որոշումների կայացնելու:

Տնօրենն իրավունք ունի առանց լիազորության գործարքներ կատարել Ընկերության անունից, եթե գործարքի գումարը չի գերազանցում զուտ ակտիվների մեծության 25 տոկոսից:

Ընկերության տնօրենը պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իր կողմից ներկայացվող Ընկերության:

Նա պարտավոր է Ընկերության կամ Ընկերության մասնակիցների պահանջով հատուցել իր կողմից Ընկերությանը պատճառված վնասները: Ընկերությանը պատճառված վնասների հատուցման հայցով դատարան դիմելու իրավունք ունի Ընկերությունը կամ նրա մասնակիցը:

7.14 Ընկերության տնօրենը իր իրավասության սահմաններում

- առանց լիազորագրի գործում է Ընկերության անունից,
- տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում ֆինանսական ռեսուրսները
- կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային
- տալիս է լիազորագրեր, այդ թվում վերալիազորման իրավունքով լիազորագրեր
- բանկային հիմնարկներում բացում է հաշվարկային և այլ հաշիվներ
- հաստատում է հաստիքներ
- իրականացնում է Օրենքով, Ընկերության կանոնադրությամբ իրեն վերապահված կամ Ընկերության ընդհանուր ժողովի կողմից տրված այլ լիազորություններ և հանձնարարություններ:

7.15.Ընկերությունն իրավասու է իր գործադիր մարմնի իրավասությունները փոխանցել կառավարչին (առևտրային կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր)

7.16.Ընկերության վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգողը) ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից՝ 3 տարի ժամկետով: Ընկերության վերստուգիչ հանձնաժողովը բաղկացած է 3 անդամներից (նախագահ և հանձնաժողովի 2 անդամներ):

Վերստուգող հանձնաժողովն իրականացնում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ, ինչպես նաև Ընկերության մասնակիցներից յուրաքանչյուրի պահանջով:
Տնօրենը չի կարող լինել վերստուգիչ հանձնաժողովի անդամ:
Վերստուգիչ հանձնաժողովն իրավունք ունի Ընկերության պաշտոնատար անձանցից պահանջելու իրեն ներկայացնել բոլոր անհրաժեշտ նյութերը, անձնական բացատրությունները՝ գրավոր կամ բանավոր ձևով:
Ընկերության ֆինանսական և տնտեսական ստուգումն իրականացվում է գործող օրենսդրությանը համապատասխան, Հայաստանի Հանրապետության ֆինանսական և այլ լիազորված մարմինների, հսկողական ծառայությունների կողմից իրենց իրավասության սահմաններում:
Ընկերությունը պարտավոր է ֆինանսատնտեսական գործունեություն կատարել ոչ ուշ, քան տարին մեկ անգամ:
Վերստուգիչ հանձնաժողովը ստուգումների արդյունքներն ուղարկում է Ընկերության ընդհանուր ժողով:
Վերստուգիչ հանձնաժողովը ըստ տարեկան հաշվետվության և հաշվեկշռի կազմում է եզրակացություն: Առանց այդ եզրակացության Ընկերության հաշվեկշիռը ենթակա չէ հաստատման ընդհանուր ժողովի կողմից: Վերստուգիչ հանձնաժողովը պարտավոր է պահանջել գումարելու արտահերթ նիստ, եթե գտնում է, որ Ընկերության շահերին էական սպառնալիք է առաջացել:
Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվության հավաստիությունը վերստուգելու համար Ընկերությունն իրավունք ունի ամեն տարի ներգրավել Ընկերության կամ նրա մասնակիցների հետ գույքային շահերով չկապված արհեստավարժ վերստուգիչի՝ աուդիտորի (արտաքին աուդիտ):
Ընկերության ընդհանուր ժողովի որոշմամբ Վերստուգիչ հանձնաժողովի ֆունկցիաները կարող է իրականացնել վարձատրվող վերստուգողը, որը պետք է հաշվետու լինի միայն ընդհանուր ժողովին: Որպես վերստուգող կամ վերստուգիչ հանձնաժողովի անդամ կարող է լինել նաև Ընկերության մասնակից չհանդիսացող անձը: Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի անդամ կամ վերստուգող չի կարող լինել Ընկերության տնօրենը: Վերստուգողը կարող է միաժամանակ սպասարկել մեկից ավելի իրավաբանական անձանց:

8. Ընկերության մասնաճյուղեր և ներկայացուցչություններ

8.1. Հայաստանի Հանրապետության տարածքում և նրանից դուրս Ընկերությունը չունի մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

9.Ընկերության վերակազմակերպումը և լուծարումը

9.1. Ընկերությունը նրա մասնակիցների միաձայն որոշմամբ կարող է կամովին վերակազմակերպվել կամ լուծարվել:
Ընկերությունը կարող է դատական կարգով վերակազմակերպվել կամ լուծարվել միայն Օրենքով սահմանված դեպքերում և կարգով:
Եթե լուծարվող ընկերության գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա այն կարող է լուծարվել միայն սնանկության հետևանքով:
Ընկերության վերակազմակերպման և լուծարման կարգը և պայմանները սահմանվում են օրենսգրքով և այլ օրենքներով:
9.2. Ընկերությունն իրավունք ունի վերակազմավորվել բաժնետիրական ընկերության:
9.3. Ընկերության մասնակիցների թիվը 49-ը գերազանցելու դեպքում Ընկերությունը մեկ տարվա ընթացքում պետք է վերակազմավորվի բաժնետիրական ընկերության, այդ ժամկետը լրանալուց հետո դատական կարգով լուծարվում է, եթե նրա մասնակիցների թիվը չպակասի մինչև սույն կետում սահմանված քանակը:
9.4. Ընկերությունը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարած՝ այդ մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում համապատասխան գրանցում կատարելու պահից:

«Էր Ռադիո Միջմայրցամաքային» ՍՊԸ Կանոնադրության հավելված

«Էր Ռադիո Միջմայրցամաքային» ՍՊ
Ընկերության մասնակիցների ցանկը

h/h	մասնակցի տվյալները և հասցեն	բաժնեմասի քանակը	բաժնեմասի չափը	ստորագրություն
1.	Արմեն Ամիրյան անձնագիր՝ AG 0202202 տրված՝ 05.04.2005թ. 001 կողմից, հասցե՝ ՀՀ, ք. Երևան Այգեստան 2փ,տ.5	34	34 %	
2.	Հակոբ Զամբազյան անձնագիր՝ P 1882440 տրված՝ 08.11.2005թ բնակության վայրը՝ ՀՀ, ք. Երևան Իսահակյան փ, 12շ, բն. 5	33	33 %	
3	Միշա Հակոբյան անձնագիր AH 0235632, տրված 02.08.2006թ, 040 կողմից, հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Նորատուս	33	33 %	

Կազմված է 03.08.2007 թ. և բաղկացած է 2 թերթից

Տպագրված է ընդամենը 5 օրինակ

ՕՐԻՆԱԿ 5

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների 03.08.2007 թ. կայացած արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 2.3. որոշմամբ

ՍՊԸ տնօրեն՝

Կոստանյան

"03" 08 2007 թ.

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 30.12.1999 թ.

գրանցման թիվ 273.110.02699

վկայական 02 Ա 046925

06.04.2007 թ. գրանցված կանոնադրության թիվ 001.3 փոփոխությունը գրանցված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից "20" 09 2007 թ.

Պետական ռեգիստրի ղեկավար՝

Ա. Սարգսիրոսյան

«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

(փոփոխություն)

«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Ընկերության կանոնադրության 1.1. կետից հետո ավելացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը մասնակիցների 03.08.2007 թ. կայացած արտահերթ ընդհանուր ժողովի որոշման համաձայն վերակազմակերպվել է նրանից նոր՝ «ԱՐ ՌԱԴԻՈ ՆԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության առանձնացման ճանապարհով:»:

2. Կանոնադրության 5.1. կետը կարդալ հետևյալ խմբագրությամբ.

«5.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 50,000 (հիսուն հազար) դրամ՝ 17,000 դրամ, 16,500 դրամ և 16,500 դրամ անվանական արժեքներով թվով երեք բաժնեմասեր:

Կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող ընկերության գույքի նվազագույն չափը: Ընկերության կանոնադրական կապիտալը չպետք է պակաս լինի «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չափից:

Ընկերության կանոնադրական կապիտալի բոլոր բաժնեմասերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և պատկանում են Ընկերության մասնակիցներին, որոնց ցանկը, անձնագրային տվյալներն ու յուրաքանչյուրի ունեցած բաժնեմասի չափը (բաժնեմասը) բերված է է սույն կանոնադրության բաղկացուցիչ մաս հանդիսացող հավելվածում:»:

3. Կանոնադրության հավելվածի մասնակիցների ցանկը կարդալ հետևյալ խմբագրությամբ.

Մասնակցի քաղաքացիությունը, անունը, ազգանունը անձնագրի տվյալները բնակության վայրը	բաժնեմասը (դրամ)	բաժնեմասի չափը	ստորագրություն
1. Հայաստանի Հանրապետության քաղաքացի Արմեն Արտավազդի Ամիրյան անձնագիր՝ [redacted]	17,000	34 %	[redacted]
2. Հորդանանի քաղաքացի Յաքուբ Ջամբազյան անձնագիր՝ [redacted] (կացության հատուկ կարգավիճակ) անձնագիր՝ [redacted]	16,500	33 %	[redacted]
3. Հայաստանի Հանրապետության քաղաքացի Միշա Անդրանիկի Հակոբյան անձնագիր՝ [redacted]	16,500	33 %	[redacted]

Սույն փոփոխությունը հանդիսանում է «ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ 06.04.2007 թ. գրանցված կանոնադրության բաղկացուցիչ մասը:

Կազմված է 24.10.2007 թ. և բաղկացած է 2 թերթից

Տպագրված է ընդամենը 5 օրինակ

ՕՐԻՆԱԿ 5

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ մասնակիցների և «ԱՐ ՌԱԴԻՈ ՆԵՏ» ՍՊԸ մասնակիցների 24.10.2007 թ. կայացած համատեղ ընդհանուր ժողովի թիվ 2. որոշմամբ

«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ տնօրեն՝

_____ Հ. Կոստանյան

_____2007 թ.

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 30.12.1999 թ.

գրանցման թիվ 273.110.02699

վկայական 02 Ա 046925

06.04.2007 թ. գրանցված կանոնադրության թիվ 002.3 փոփոխությունը գրանցված է պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից "31" 10 2007 թ.

Պետական ռեգիստրի ղեկավար՝

_____ Ս. Մարտիրոսյան

02.11.2007թ.

«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(փոփոխություն)

«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

Ա) Կանոնադրության 1.1. կետից հետո ավելացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողեր.

«ԱՐ ՌԱԴԻՈ ՆԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների և «ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների 24.10.2007 թ. կայացած համատեղ ընդհանուր ժողովի որոշման համաձայն կատարվել է «ԱՐ ՌԱԴԻՈ ՆԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միացում Ընկերությանը:

Ընկերությունը հանդիսանում է «ԱՐ ՌԱԴԻՈ ՆԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Կենտրոնական մարմնի կողմից 20.09.2007 թ., գրանցման թիվ՝ 222.110.00828, վկայական՝ 03 Ա 077888) իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:»:

Բ) Կանոնադրության 5.1. կետը կարդալ հետևյալ խմբագրությամբ.

«5.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 50,500 (հիսուն հազար հինգ հարյուր) դրամ, որը բաժանված է 17,170 դրամ (բաժնեմասի չափը՝ 34 տոկոս), 16,665 դրամ (բաժնեմասի չափը՝ 33 տոկոս) և 16,665 դրամ (բաժնեմասի չափը՝ 33 տոկոս) անվանական արժեքներով թվով 3 բաժնեմասերի:

Կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող ընկերության գույքի նվազագույն չափը: Ընկերության կանոնադրական կապիտալը չպետք է պակաս լինի «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չափից:

Ընկերության կանոնադրական կապիտալի բոլոր բաժնեմասերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և պատկանում են Ընկերության մասնակիցներին, որոնց ցանկը և յուրաքանչյուրի ունեցած բաժնեմասի չափը (բաժնեմասը) բերված է սույն կանոնադրության բաղկացուցիչ մաս հանդիսացող հավելվածում:»:

Գ) կանոնադրության հավելվածի մասնակիցների ցուցակը կարդալ հետևյալ խմբագրությամբ.

«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ կանոնադրության հավելված

«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

մասնակիցների ցուցակ

Մասնակցի քաղաքացիությունը, անունը, ազգանունը անձնագրի տվյալները բնակության վայրը	բաժնեմասը (դրամ)	բաժնեմասի չափը	ստորագրություն
1. Հայաստանի Հանրապետության քաղաքացի Արմեն Արտավազդի Ամիրյան անձնագիր՝ [redacted]	17,170	34 %	[redacted]
2. Հորդանանի քաղաքացի Յաքուբ Ջամբազյան անձնագիր՝ [redacted] (կացության հատուկ կարգավիճակ) [redacted]	16,665	33 %	[redacted]
3. Հայաստանի Հանրապետության քաղաքացի Միշա Անդրանիկի Հակոբյան անձնագիր [redacted]	16,665	33 %	[redacted]

Սույն փոփոխությունը հանդիսանում է «ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 06.04.2007 թ. գրանցված կանոնադրության (փոփոխությունը գրանցվել է 20.09.2007 թ.) բաղկացուցիչ մասը:

Կազմված է - 02.2009թ.
Բաղկացած է 2 թերթից

Հաստատված է
«Ար Ռադիո Միջմայրցամաքային »
ՍՊ ընկերության
մասնակիցների ժողովի կողմից

«10» 02 2009թ.

Ընկերության Տնօրեն

Ս. Խոստանյան

Տպագրված է 5 օրինակից
Օրինակ # 1
Գրանցված է
ՀՀ Ձեռնարկությունների
Պետական Ռեգիստրի
կողմից 30.12.1999թ
գրանցման թիվ 273. 110.02699
վկայական թիվ 02Ա - 046925
Թիվ 003.3 փոփոխությունը
գրանցված է իրավաբանական
անձանց պետական
ռեգիստրի Նորք-Մարաշի
տարածքային բաժնի կողմից

«19» 02 2009թ

պետ

Ա. Մկրտչյան

«Ար Ռադիո Միջմայրցամաքային» ՍՊԸ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

(Փոփոխություն)

«Ար Ռադիո Միջմայրցամաքային» ՍՊ Ընկերության Կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

Ա) Ընկերության Կանոնադրության 5.1. կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

5.1 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 66.667.500 (վաթսունվեց միլիոն վեց հարյուր վաթսունյոթ հազար հինգ հարյուր) դրամ, որը բաժանված է 1000 բաժնեմասերի, մեկ բաժնեմասի անվանական արժեքը կազմում է 66.667,5 դրամ: Կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող Ընկերության գույքի նվազագույն չափը: Ընկերության կանոնադրական կապիտալը չի կարող պակաս լինել «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չափից:
Ընկերության բոլոր հազար բաժնեմասերը տեղաբաշխված են լրիվ վճարված և պատկանում են Ընկերության մասնակիցներին, որոնց անձնագրային տվյալները և բաժնեմասերը (բաժնեմասերի քանակը) բերված է սույն կանոնադրության բաղկացուցիչ մաս հանդիսացող հավելվածում:

Բ) Կանոնադրության հավելվածի մասնակիցների ցուցակը շարադրել հետևյալ խմբագրությամբ

«Ար Ռադիո Միջմայրցամաքային» ՍՊ
Ընկերության մասնակիցների ցանկը

հ/հ	մասնակցի տվյալները և հասցեն	բաժնեմասի քանակը	բաժնեմասի չափը	ստորագրություն
1.	Արմեն Ամիրյան անձնագիր՝ AH0487010 տրված՝ 21.12.2007թ. 001 կողմից, հասցե՝ ՀՀ, ք. Երևան Այգեստան 2փ,տ.5	340	34 %	
2.	Յաքուբ Զամբազյան, անձնագիր՝ AE 0466839 տրված՝ 09.10.2000թ. 002 կողմից, բնակության վայրը՝ ՀՀ, ք. Երևան Իսահակյան փ, 12շ, բն. 5	330	33 %	
3	Միշա Հակոբյան անձնագիր AH 0235632, տրված 02.08.2006թ, 040 կողմից, հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Նորատուս	330	33 %	

Սույն փոփոխությունը հանդիսանում է Ընկերության 06.04.2007թ. գրանցված կանոնադրության բաղկացուցիչ մասը: